

Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «ՄարտունուՏ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց
»ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *<Ստեղծարարության զարգացումը սովորողների մոտ
տեխնոլոգիայի դասին>*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հասմիկ Բեյբուրյան

Ուսուցիչ՝

Ծաղիկ Գալստյան

ԴՊՐՈՑ՝

Ծակբարի միջնակարգ դպրոց

Մարտունի-2022

Բովանդակություն

<i>1. Նախաբան.....</i>	<i>3</i>
<i>2. Գրական ակնարկ.....</i>	<i>4</i>
<i>3. Փորձարարական հետազոտություն.....</i>	<i>9</i>
<i>3.1 Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն</i>	<i>10</i>
<i>3.2 .Փորձարարական դաս-1.....</i>	<i>12</i>
<i>3.3 .Փորձարարական դաս-2.....</i>	<i>13</i>
<i>4. Վերլուծություն.....</i>	<i>15</i>
<i>5. Գրականության ցանկ.....</i>	<i>16</i>
<i>6. Հավելված</i>	<i>17</i>
<i>1. Դասապլան-1.....</i>	<i>17</i>
<i>2. Դասապլան-2.....</i>	<i>19</i>

Նախաբան

«Մտածող և զարգացող մարդ դաստիարակելու համար, անհրաժեշտ է առաջին հերթին նրան դաստիարակել գեղագիտորեն»: **Ֆրիդրիխ Շիլեր**

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կլցնի հատորներ: Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար: Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիք իմատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Առանց գնահատման հնարավոր չէ կազմակերպել ցանկացած գործունեություն, այդ թվում և ուսումնախմբակային:

Գնահատականը ուսումնախմբակային գործունեության կարևոր բաղադրիչներից է, կարգավորիչը, արդյունավետության ցուցանիշը: Ակնհայտ է, որ ուսումնական աշխատանքի գնահատման ավանդական համակարգի պահպանումը, որի շրջանակներում համարյա բացառվում էր սովորողների մասնակցությունը, դժվարացնում էր անցումը զարգացնող ուսուցման համակարգին:

Տրամաբանական է, որ դպրոցի անցումը զարգացնող համակարգին պետք է ուղեկցվեր ուսուցման ռազմավարության, ուսումնական աշխատանքի վերահսկման և գնահատման եղանակների փոփոխությամբ: Կրթական գնահատումը ուսումնական

գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարմանամբ ողջ ականպատկերը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել կրթական գնահատման օրինաչափությունները «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում: Աշխատանքի տեսական հիմքը կազմել են բազմաթիվ գիտնականների աշխատություններ: Աշխատանքը շարադրելիս կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդները, ինչպիսիք են՝ պատմական, համակարգակառուցվածքային, դոկտրինալ մեկնաբանման և սոցիոլոգիայի մեթոդները:

Գրական ակնարկ

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ:

Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման ընթացքում ուսուցիչների հիմնական դերը՝ իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունը աշակերտներին փոխանցելն է: Այս մոդելի մեջ ուսուցումը և գնահատումը դիտվում են որպես երկու առանձին մասեր:

Աշակերտների ուսուցումը գնահատվում է օբյեկտիվորեն գնահատված թեստերի և գնահատականների միջոցով : Ուսուցման աշակերտակենտրոն մոտեցման մեջ, ուսուցիչները և աշակերտները ուսումնական գործընթացում հավասարապես ակտիվ դեր են կատարում:

Ուսուցչի հիմնական դերն է ուսուցանել և նպաստել աշակերտի ուսուցմանն ու ընդհանուր նյութի ընկալմանը: Գնահատականը դրվում է այն ժամանակ, երբ աշակերտի կողմից կատարված են լինում ուսուցչի կողմից հանձնարարված առաջադրանքները: Թվանշանը և գնահատումը իրականացվում են 10-միավորային սանդղակով: Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական՝ գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային:

Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Գնահատումը բազմաբնույթ տերմին է, որը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց, որն օգտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելու համար:

Սովորողների մասին որոշումները ներառում են դասավանդման կառավարումը, սովորողներին կրթական ծրագրերի տարբեր տեսակներում ներգրավելը, նրանց համապատասխան կարգեր տալը, ուղղորդելը և խորհուրդներ տալը, կրթական հնարավորությունները բացահայտելը, ինչպես նաև նրանց իմացությունը հավաստագրելը, արձանագրելն ու վկայագրելը: «Գնահատում»

հասկացությունը ձեռք է բերել նոր իմաստ: Դա արդեն անցել էիր կրթական-հոգեբանական արմատներից այն կողմ և մտել դասարան:

Գնահատումը, որպես գործընթաց, դասարանում նշանակում է նաև քանակական և որակական տվյալների նպատակային հավաքում: Ուսուցիչների համար գնահատման նպատակը սովորողների մասինորոշումներ կայացնելն է թե որպես խումբ, թե որպես անհատ: Օրինակ՝ ուսուցիչներն ախտորոշում են աշակերտների դժվարությունները, ուսուցումից հետո ստուգում են յուրացումը, որոշում են նյութի՝ յուրացման համար պարտադիր չափը և ուսուցման հաջորդականության մեջ ընտրում են այն կոնկրետ կետը, որտեղից պետք է սկսել՝ ելնելով սովորողների արդեն ունեցած գիտելիքներից :

Դասարանում գնահատումը ենթադրում է սովորողների կողմից առաջադրանքների կատարումը զանազան միջավայրերում և համատեքստերում:

Գնահատումը կարող է լինել կամ չլինել միջամտողական, այլ կերպ՝ սովորողները կարող են իմանալ, թե իրենց ինչի համար են գնահատում, կամ գնահատումը կարող է կատարվել դասավանդման հետ միաձույլ՝ աշակերտների կողմից ընկալվելով ընդամենը որպես իրենց սովորածի մեջ գործնականում վարժվելու հնարավորություն:

Գնահատումն սկսվում է նպատակների սահմանումով, շարունակվում առաջադիմության ստուգումներով և ավարտվում այն բանի արժեվորումով, թե ինչ չափով են նպատակներն իրականացվել: Նպատակը գործերի ապագա ցանկալի վիճակն է: Կարդալ սովորելը կամ դիֆերենցիալ հավասարումներ լուծելը ուսումնական նպատակներից են: Նպատակներն անհրաժեշտ են աշակերտների ջանքերի և ուսուցման ծրագրերի հաջողությունը գնահատելու համար:

Թեպետ դպրոցը կամավոր չէ, և սովորողները գտնվում են դպրոցում՝ որոշակի նպատակների հասնելու համար, որոնք ընդհանուր առմամբ պարտադրվում են նրանց, սակայն սովորողներն ու ուսուցիչները պետք է համախմբվեն այն միասնական հեռանկարի տեսանկյունից, թե ինչի կարող են հասնել՝ բոլորը միասին աշխատելու դեպքում:

Ուսումն սկսվում է այն բանով, որ ուսուցիչները նպաստում են սովորողների մեջ սովորելու հանձնառության ստեղծմանը, որը հիմնվում է նրանց կողմից ուսումնառության նպատակների ըմբռնման, ընդունման դրանց հասնելու ցանկության վրա: Այն դպրոցները, որոնք կիրառում են ուսուցողական գնահատում, նվաճումներ են արձանագրում ոչ միայն ակադեմիական առաջադիմության առումով, այլ մասնավորապես մեծ արդյունքներ են ցուցադրում նախկինում վատ սովորող աշակերտների առումով:

Բարելավվում է նաև հաճախելիությունն ու կայուն ուսումնառությունը, ինչպես նաև աշակերտների աշխատանքի որակը: Աշակերտի՝ դասավանդված նյութի ըմբռնողությունը գնահատելու նպատակով ուսուցիչը կիրառում է մի շարք մոտեցումներ:

Աշակերտի ուսումնառության մակարդակը որոշելու համար ուսուցիչը կարող է դպրոցը նդունվելիս կամ դպրոցական քառորդի ընթացքում որոշակի ժամանակահատվածների կատարել ախտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում, որպեսզի կարողնա մշակել ուսուցման ռազմավարություններ :

Դասապրոցեսում փոխշփումների ընթացքում ուսուցիչները խրախուսում են երկխոսության և հարցադրման մի շարք մեթոդների կիրառումը: Պատճառահետևանքային կապերին առնչվող կամ երկար պատասխան պահանջող հարցերը հաճախ բացահայտում են, օրինակ, աշակերտների թյուրըմբռնումները:

Ուսուցիչները կարող են իրենց բանավոր կամ գրավոր կարծիքն (հետադարձկապ) արտահայտել աշակերտի աշխատանքի վերաբերյալ: Ուսուցիչներն ու հետազոտողները պարզել են, որ ամենաարդյունավետ հետադարձ կապը ճիշտ ժամանակին, կոնկրետ և ըստ որոշակի չափանիշների տրամադրված կարծիքն է:

Ինչն ամենակարևորն է՝ ուսուցիչները պարտադիր կերպով պետք է հարմարեցնեն իրենց պլաններն ու դասավանդման ռազմավարությունները, որպեսզի բավարարեն գնահատման միջոցով բացահայտված ուսումնառության կարիքները:

Նշենք, որ ուսուցիչները պետք է հստակ պատկերացնեն ուսումնական ծրագրի նպատակները, ուսումնառության առավել կարճաժամկետ նպատակներն ու

դասարանային առաջադրանքների նպատակը՝ ուսումնառության այդ նպատակների առնչությամբ, հաղորդեն այդ մտադրությունները և առաջադրանքների նպատակը աշակերտներին: Որպեսզի ընթացիկ գնահատումն արդյունավետ լինի ուսուցմանն ու ուսումնառությանը աջակցման և դրանց բարելավման առումով, անհրաժեշտ է, որպեսզի թե՛ ուսուցիչները, և թե՛ աշակերտները հասկանան, թե ինչ են անում: Այստեղից հարց է առաջանում՝ որքա՞ն լավ ենք մենք ապագա մանկավարժներին ուսուցանում փիլիսոփայության և մանկավարժության առումով, որպեսզի վերջիններս հասկանան ուսուցման, ուսումնառության և գնահատման ինտեգրումը, ուսումնառության գործընթացի բարդությունը :

Ուսուցիչն աշակերտներին հետադարձ կապ ապահովող ուղերձներ է «փոխանցում» այն մասին, թե իրենց կատարած աշխատանքում ինչն է ճիշտ և ինչն է սխալ, որոնք են աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, իսկ աշակերտներն այդ տեղեկատվությունն օգտագործում են իրենց աշխատանքն այնուհետև բարելավելու համար:

Այս «փոխանցման» մոտեցման հետ կապված առկա են բազմաթիվ խնդիրներ՝ այդ մոտեցումն ընթացիկ (ձևավորող) գնահատման և հետադարձ կապի մասով կիրառելիս:

Աշակերտները կարող են հասնել ուսումնառության նպատակներին միայն այն դեպքում, եթե իրենք ամբողջությամբ հասկանում են այդ նպատակները, ընդունում են, որ

Դրանք իրենց նպատակներն են և կարողանում են գնահատել արձանագրած առաջընթացը: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է:

Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Ուսուցանող գնահատումը պետք է հաշվի առնի սովորողի մոտիվացիայի կարևորությունը: Խրախուսող գնահատումը խթանում է մոտիվացիան՝ ավելի շատ շեշտելով առաջընթացն ու հաջողությունները քան ձախողումները:

Ուսուցանող գնահատան առանձնահատկությունը այն է, որ դրա միջոցով սովորողն ուրիշների հետ չի համեմատվում հատկապես կարևոր է դառնում սովորողի պարագայում: Ուսուցանող գնահատումը պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների լիարժեք բացահայտմանը և իրենց նվաճումները գնահատելու կարողությունների ձևավորմանը:

Փորձարարական հետազոտություն

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի դերն ունշանակությունը: Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- ուսումնասիրել և ներկայացնել թե ի՞նչ դեր ունի «Տեխնոլոգիա» առարկան,
- ընտրված մեթոդների միջոցով ուսումնասիրել և ներկայացնել «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնառության արդյունքում, ինչպիսի՞ վերջնարդյունքներ են ձևավորվում դպրոցականների մոտ,
- ուսումնասիրել և ներկայացնել թե ո՞րն է «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման կարևորությունը,
- պարզել, արդյո՞ք «Տեխնոլոգիա» առարկայի դասագրքերը նպաստում են սովորողների մտավոր կարողությունների զարգացմանը և առարկայի ավելի դյուրին յուրացմանը,
- պարզել, արդյո՞ք գործնական աշխատանքները նպաստում են երեխաների կարողությունների և հմտությունների զարգացմանը,
- ուսումնասիրել և ներկայացնել այն մեթոդներն ու տեխնոլոգիաները, որոնք կիրառում են ուսուցիչները «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում:

Ուսումնասիրությունն անցկացնելու համար ընտրել եմ հարցման, դիտման և զրույցի մեթոդները:

Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն

Ընտրված մեթոդիկաների հիման վրա ես կազմել եմ հարցաթերթիկ, որի միջոցով է լանցկացրել եմ ուսումնասիրությունը և կատարել վերլուծություն: Ուսումնասիրության և հարցումների ընթացքում ուսուցիչները նշեցին, որ «Տեխնոլոգիա» հանրակրթական առարկայի հիմնական նպատակն է սովորողներին նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին՝ դաստիարակել կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի:


Առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով, ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթների պահպանման և զարգացման գործը:

Հարցումների ընթացքում «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամ էր, որի ընթացքում ուսուցիչը երեխաներին նորնյութեր հաղորդում: Այնուհետև հարցման ընթացքում ուսուցիչներին հարցրեցինք, թե շնորհանդեսները ի՞նչ հնարավորություն են տալիս նրանց՝ «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում:

Հարցին զուգահեռ նաև ուսուցիչներին ներկայացվեց հնարավոր հինգ տարբերակները, որոնցից նրանք ընտրություն կատարեցին:

Արդյունքները ներկայացված են ստորև գծապատկերի տեսքով.

**Շնորհանդեսը (պրեզենտացիա) ի՞նչ հնարավորություն է տալիս ուսուցչին՝
տեխնոլոգիայի դասավանդման ժամանակ**




Գծապատկերի արդյունքներից հանգում ենք այն եզրահանգմանը, որ ուսուցիչների մեծ մասը նշում է, որ շնորհանդեսները հնարավորություն են տալիս պատկերավոր կերպով ներկայացնել ուսուցանվող թեման:

Ուսուցիչները նշեցին, որ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը ուղղված է նախնական աշխատանքային հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նյութերից, կենցաղային սարքերից, աշխատանքային գործիքներից և սարքավորումներից անվտանգ օգտվելու հմտությունների ձևավորմանը:

Այնուհետև հարցին, թե ո՞րն է «Տեխնոլոգիա» առարկայի դասերին S2S-ների օգտագործման նպատակները, նշելով ևս մի քանի տարբերակներ, որոնցից ուսուցիչները կատարեցին իրենց ընտրությունը:

«Տեխնոլոգիա» առարկայի դասերին՝ ՏՀՏ-ների օգտագործման նպատակները



Ուսուցիչների մեծամասնությունը նշեցին, որ ՏՀՏ-ները հնարավորություն են տալիս իրենց արագ և որակյալ պատրաստվել դասերին:

Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ նաև Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 18 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Տեխնոլոգիան անցնում են շաբաթական 2 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 6 կամ 7-րդ ժամերին:

Տեխնոլոգիա առարկայի դասաժամերին դասարանը բաժանվում է 2 խմբի՝

աղջիկների և տղաների: Ես դասավանդում եմ միայն տղաների խմբին: Քանի որ այդ դասարանում տղաները այնքան էլ աշխատասեր չեն, անտարբեր են ուսման նկատմամբ, հետևաբար չեն սիրում նաև մասնակացել դասերին և կատարել աշխատանքները: Այդ իսկ պատճառով ես որոշեցի իմ հետազոտական աշխատանքը իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդով՝ ապահովելով բոլոր աշակերտների մասնակցությունը ամբողջ դասաժամին:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերում էր «Մետաղներ» թեմային (տե՛ս դասապլան-1 էջ՝16): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տրնային աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Նոր թեման սկսվեց «Մետաղների ֆիզիկական հատկությունները և դասակարգումը» գծապատկերների լրացումով:

Օգնող հարցերի միջոցով աշակերտները սկսեցին լրացնել գծապատկերը: Դասարանում եղած 18 տղաններն էլ մասնակցեցին հարցմանը և կատարեցին նշումներ իրենց տետրերում: Նոր թեման ամբողջովին հաղորդվեց հարցադրումների մեթոդով, որին համարյա բոլոր աշակերտները մասնակցեցին սիրով, քանի որ թեման ծանոթ էր իրենց քիմիա առարկայից: Դասարանը բաժանեցի 4 համագործակցային խմբերի, երկու խումբը 5, երկու խումբը՝ 4 աշակերտով:

Բացատրեցի երկաթի և նրա համաձուլվացքների կարևորությունը մեր կյանքում: Խոսեցի թուջի (չուգուն) ստացման և նրանից պողպատի ստացման մասին: Լրացուցիչ տեղեկություններ տվեցի տարատեսակների և կիրառության մասին, օգտվելով համացանցից:

Հանձնարարեցի խմբերին կազմել հարցեր, որոնց պատասխաններով կամփոփվի դասը և կպարզենք յուրացման մակարդակը:

Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում չներգրավվող աշակերտները: Ամփոփեցի խմբերի աշխատանքը, և ընթացքում կատարված ձևավորող գնահատականները վերածեցի միավորային գնահատականի:

Դասը ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

3.3. Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր << Պողպատի տեսակները>> (տե՛ս դասալլան-2 էջ՝ 18): Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, կազմակերպվեց անհասկանալի հատվածների քննարկում:

Աշակերտները նշեցին, համակարգչի կիրառումը դասապրոցեսում իրենց շատ հետաքրքիր էր, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են:

Նոր թեման սկսվեց մտազրոհով: Գրատախտակին գրվեց <<Պողպատ>> բառը և աշակերտները կազմակերպեցին քննարկում այս բառի վերաբերյալ: Ներկայացրեցի պողպատները ըստ քիմիական բաղադրության և ըստ կիրառման բնագավառների: Նշեցի, թե պողպատները ինչպե՞ս են պիտակավորվում: Եվ խոսեցի նրանց հատկություններից ելնելով կիրառության մասին: Բացատրեցի պողպատների այս կամ այն հատկությունների փոփոխման համարկիրառվող ջերմամշակման եղանակների մասին:

Նոր թեման ամբողջովին հաղորդվեց հարցադրումների մեթոդով (տես դասալլան-2, էջ՝ 21), ինչը ևս հնարավորություն տվեց ինձ ներգրավվել բոլոր աշակերտներին դասապրոցեսի մեջ: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով աշակերտներին բաժանեցի եռյակների՝ կազմելով 6 եռյակ: Յուրաքանչյուր եռյակին բաժանեցի համաձուլվածքների վերաբերյալ աղյուսակներ, որ գտնեն իրենց ծանոթ համաձուլվածքները և նշեն նոր ծանոթացած համաձուլվածքներին:

առաջադրվեց գրել 2-ական հարց թեմայի վերաբերյալ և իրենց իսկ ցանկությամբ ընտրել պատասխանող զույգին: Այս անգամ աշակերտները կազմակերպեցին քննարկում, վերլուծեցին հարցերը: Թեման ամփոփելու համար յուրաքանչյուր աշակերտ կազմեց մեկ նախադասություն կամ ասեց մեկ արտահայտություն թեմայի վերաբերյալ: Ամփոփվեց խմբերի աշխատանքը և գնահատվեց: Դասը ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել եմ հետևյալ եզրահանգումներին.

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման ընթացքում ուսուցիչների հիմնական դերը՝ իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունը աշակերտներին փոխանցելն է: Այս մոդելի մեջ ուսուցումը և գնահատումը դիտվում են որպես երկու առանձին մասեր:

Աշակերտների ուսուցումը գնահատվում է օբյեկտիվորեն գնահատված թեստերի և գնահատականների միջոցով: Ուսուցման աշակերտակենտրոն մոտեցման մեջ, ուսուցիչները և աշակերտները ուսումնական գործընթացում հավասարապես ակտիվ դեր են կատարում: Ուսուցչի հիմնական դերն է ուսուցանել և նպաստել աշակերտի ուսուցմանն ու ընդհանուր նյութի ընկալմանը:

Գնահատականը դրվում է այն ժամանակ, երբ աշակերտի կողմից կատարված են լինում ուսուցչի կողմից հանձնարարված առաջադրանքները:

Սովորողների մասին որոշումները ներառում են դասավանդման կառավարումը, սովորողներին կրթական ծրագրերի տարբեր տեսակներում ներգրավելը, նրանց համապատասխան կարգեր տալը, ուղղորդելը և խորհուրդներ տալը, կրթական հնարավորությունները բացահայտելը, ինչպես նաև նրանց իմացությունը հավաստագրելը, արձանագրելն ու վկայագրելը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ժ. Ավետիսյան, «Տեխնոլոգիա», Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, «Աստղիկ գրատուն», 2014թ.:
2. Հովսեփյան Ս., ՀարությունյանԱ., ԱղաջանյանՄ., Վերդյան Լ., «Տեխնալոգիա», ք. Երևան, 2008 թ.:
3. Голованова Н.Ф., Педагогика: Учебник и практикум для СПО // Н.Ф. Голованова. - Люберцы: Юрайт, 2016:

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Ծաղիկ Գալստյան

<i>Առարկա՝</i>	Տեխնոլոգիա	Ամսաթիվ		Կիսամյակ	I	Դասարան	VII
Թեմա՝	Մետաղներ						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, համակարգիչ, պաստառներ, սխեմաներ, մետաղների և համաձուլվածքների հավաքածու, գործիքներ՝ որոնք պատրաստված են մետաղներից						
Դասի նպատակը՝	<ol style="list-style-type: none"> 1. Իմանալ մետաղների դասակարգումը: 2. Տարբերել սև և գունավոր մետաղները 3. Գիտենալ մետաղների դասակարգումը ըստ կիրառման բնագավառների 4. Իմանալ մետաղների մշակման ու ջերմամշակման եղանակները 						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Տարբերել մետաղները Իմանալ մետաղների և դրանց կիրառությունների մասին Գիտենալ մետաղական համաձուլվածքների և դրանց ստացման եղանակների մասին						
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>		Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ (ներ)	

<p>5րոպե-սկիզբ</p>	<p>Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:</p>	<p>Ողջունել դասարանին, ն/բ:</p>	<p><i>Ի՞նչ</i></p>	
<p>7րոպե</p>	<p>Ներկայացնել տնային աշխատանքները</p>	<p>Մտուզել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը</p>	<p><i>բնութագրական ֆիզիկական հատկություններ ունեն մետաղները</i></p>	<p><i>Մտազորոհ մեթոդ</i></p>
<p>25 րոպե-ընթացք</p>	<p>լրացնել գծապատկերներ</p> <p>բաժանվում են խմբերի, համակարգչով դիտում են համապատասխան նյութեր, կազմում են հարցեր</p> <p>Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են չներգրավվող աշակերտները՝ հարցեր են տալիս թեմայի վերաբերյալ</p>	<p>Գրատախտակին գծել գծապատկերը</p> <p>Նոր թեմայի հաղորդում՝ բաց և փակ հարցերի միջոցով՝ ապահովվելով բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին</p> <p>Տալ ուղղորդող հարցադրումներ</p> <p>Տրամադրել բանվոր հետադարձ կապ ըստ անհրաժեշտության, տրամադրել ձևավորող գնահատում</p> <p>Թեման ամփոփել հարցերի միջոցով՝ ելնելով կատարված աշխատանքներից</p>	<p><i>մետաղները ըստ գունավորման Ի՞նչ խմբերի են բաժանվում:</i></p> <p><i>Բերեք սև մետաղների օրինակներ</i></p> <p><i>Բերեք գունավոր մետաղների օրինակներ</i></p>	<p><i>Հարցադրումների մեթոդ</i></p> <p><i>Խմբային աշխատանք</i></p>
<p>3րոպե</p>			<p><i>Որա՞նք են երկաթի</i></p>	
<p>5րոպե-ավարտ</p>		<p>Գնահատում Տնային աշխատանքի հանձնարարում</p>	<p><i>համաձուլվածքները</i></p>	

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Ծաղիկ Գալստյան

<i>Առարկա՝</i>	Տեխնոլոգիա	Ամսաթիվ		Կիսամյակ	I	Դասարան	VII
Թեմա՝	Պողպատի տեսակները						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, համակարգիչ, պաստառներ, սխեմաներ, պողպատի համաձուլվածքների հավաքածու, իրերեր՝ որոնք պատրաստված են պողպատից						
Դասի նպատակը՝	Գիտենալ պողպատների դասակարգումը ըստ քիմիական բաղադրության: Գիտենալ պողպատների դասակարգումը ըստ կիրառման բնագավառների: Իմանալ պողպատների ջերմամշակման կարևորությունը և եղանակները						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Գիտենալ պողպատների դասակարգումը ըստ քիմիական բաղադրության: Գիտենալ պողպատների դասակարգումը ըստ կիրառման բնագավառների: Իմանալ պողպատների ջերմամշակման կարևորությունը և եղանակները						
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>		Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ (ներ)	
5րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային	Ողջունել դասարանին, ն/բ: 19 Ստուգել տնային աշխատանքները,		<i>ի±նչ</i> <i>բնութագրական</i> <i>ֆիզիկական</i>			

5րոպե-սկիզբ	<p>Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:</p> <p>Ներկայացնել տնային աշխատանքները</p>	<p>Ողջունել դասարանին, ն/բ:</p> <p>տնային աշխատանքի ստուգում, կազմակերպել անհասկանալի հատվածների քննարկում:</p>	<p><i>Ի՞նչ պես են դասակարգվում պողպատներն ըստ քիմիական բաղադրության</i></p>	
7րոպե	<p>Կազմակերպեցին քննարկում <Պողպատ> բառի վերաբերյալ</p>	<p>Նոր թեմայի հաղորդում՝ բաց և փակ հարցերի միջոցով՝ ապահովվելով բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին</p>	<p><i>Ի՞նչ պես են դասակարգվում պողպատներն ըստ կիրառման բնագավառի:</i></p>	<p>Մտազրոհ մեթոդ</p>
25 րոպե-ընթացք	<p>բաժանվում են եռյակների, համակարգչով դիտում են համապատասխան նյութեր, լրացնում են աղյուսակը</p>	<p>Բաժանել եռյակներին աղյուսակներ</p> <p>Տալ ուղղորդող հարցադրումներ</p>	<p><i>Ի՞նչ նպատակով է կատարվում պողպատի ջերմամշակում</i></p>	<p>Հարցադրումների մեթոդ</p>
3րոպե	<p>Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են չներգրավվող աշակերտները՝ հարցեր են տալիս թեմայի վերաբերյալ</p>	<p>Տրամադրել բանվոր հետադարձ կապ ըստ անհրաժեշտության, տրամադրել ձևավորող գնահատում</p> <p>Թեման ամփոփել հարցերի միջոցով՝ ելնելով կատարված աշխատանքներից</p>	<p><i>Ի՞նչ փոփոխությունն էր են տեղի ունենում պողպատտիմխման,</i></p>	<p>Խմբային աշխատանք</p>
5րոպե-ավարտ		<p>Գնահատում Տնային աշխատանքի հանձնարարում</p>	<p><i>մխամեղմանն թրծաթողման հետևանքով</i></p>	

